Ս. Հակոբա վանքի նվիրատվությունների մատյանը թեև անհամեմատ ավելի համեստ բովանդակություն ունի, սակայն ձեռագրագիտական տեսակետից և աղբյուրագիտական արժանիքներով այն կարող է դասվել այս կարգի հուշարձանների շարքը։ Ուստի կարծում ենք իրավացի են ձեռագրի առաջին նկարագրողները, երբ մայր քարտում այն վերնագրել են «Քեսթուկ Ս. Յակոբայ վանից Ակուռոյ»։

Պատմական Հայաստանի Այրարատ նահանգի Մասյացոտն գավառի Ակոռի գյուղավանը Հայաստանի հնագույն բնակավայրերից է։ Նրա մասին առաջին անգամ հիշատակում է V դարի պատմիչ Ղազար Փարպեցին[4]։ Հետագա մատենագիրների երկերում, ձեռագրաց հիշատակարաններում և այլ աղբյուրներում եղած տեղեկությունները գալիս են վկայելու, որ Մասսի լանջին թառած այս հին ավանը, կուրծք տալով ժամանակի արհավիրքներին ու աղետներին, շարունակել է գոյատևել մինչև 1840 թ. հուլիսի 2-ը, երբ հիմնովին կործանվեց ու բնակիչներով հանդերձ թաղվեց, մնալով լավայախառն տիղմի ու Մասսի հրաբխային ցնցումներից պոկված լեռնաբեկորների փլվածքի տակ։

«Ակոռի» տեղանվան ժողովրդական ստուգաբանությունը՝ «արկուռի», ըստ որի իբր Նոյը իջնելով Արարատից առաջին անգամ այնտեղ է տնկել խաղողի որթը, ավելի լայն տարածում ստացավ ուշ միջնադարում։ Այդ շրջանի աղբյուրներում և ձեռագրաց հիշատակարաններում մեծ մասամբ գյուղն անվանվում է «Արկուռի»։

Մատենագրական աղբյուրների և XVII—XIX դդ. ճանապարհորդների տվյալներով Ղ. Ալիշանն ու Ս. Էփրիկյանը տալիս են գյուղի աշխարհագրական և տեղագրական նկարագիրը, ինչպես նաև Ս. Հակոբա վանքի լեգենդախառն, կցկտուր պատմությունը, ավարտելով այն երկրաշարժի և գյուղի կործանման նկարագրությամբ[5]։

Կործանմանը անմիջապես նախորդող տասնամյակին վերաբերող ամենահավաստի տեղեկությունները պահպանված են Ֆ. Պարրոտի «Ուղևորություն դեպի Արարատ» ուղեգրական զեկուցագրի[6] և Ի. Շոպենի 1852 թ. լույս տեսած Հայկական մարզի վիճակագրական ուսումնասիրության մեջ[7]։

Ս. Հակոբա վանքի քյոթուկի տվյալները, ինչպես ասվեց, հիմնականում վերաբերում են XVII դ. 60—70-ական թվականներին։ Թեև նվիրատվությունների մի մասին վերաբերող, տարբեր անձնավորությունների ձեռքով կատարված արձանագրությունները, XVIII դարից են (23բ էջի արձանագրությունը ունի հայոց ՌՃՕԳ (1704), իսկ 8բ էջինը ՌՃՕԶ (1707) թվականները)։

նահանգին Սիսական»-ի XIV դ. ընդօրինակությունը բովանդակող ձեռագիրը, որի վերջին 337բ—383բ էջերում կան Տաթևի վանքապատկան գյուղերից ստացվող եկամուտների և այլ կալվածների ու տնտեսական հարցերի մասին կատարված արժեքավոր հիշատակագրություններ ու արձանագրություններ։

4 Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն հայոց, աշխ. Գ. Տեր-Մկրտչյան և Ստ. Մալխասյան, Տփղիս, 1904, էջ 123, 125։

5 Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 459, 470—474, Ս. Էփրիկյան, Բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, 1902, հ. 1, էջ 81—87։

6 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1956, հ. 7, էջ 221—299։

7 *И. Шопен*, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб, 1852, стр. 490, 563—566, 1803—1806 (այսուհետև՝ Шопен).